ՀՏԴ : 929: 891.981 Իսահակյան+891.981(063)

DOI: 10.54503/0135-0536-2025.3-290

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ*

Հոկտեմբերի 22–25-ը տեղի ունեցավ հայ մեծ բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս, գրական, հասարակական-քաղաքական գործիչ, ակադեմիկոս Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջազգային հոբելյանական գիտաժողով: Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը (ԳԻ), ՌԳԱ Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) հայ բանասիրության ֆակուլտետը, Մխիթարյան միաբանությունը, Ավ. Իսահակյանի տուն-թանգարանը (Երևան) և ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանը (ՀԳԳ)՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ:

Գիտաժողովի լիագումար նիստը տեղի ունեցավ հոկտեմբերի 22-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում: Բացման խոսքում ԳԻ տնօրեն, բ. գ. թ. Հերիքնազ Ոսկանյանը *(նիստը նախագահող), մասնավորապես, ասաց. «Գիտաժողովի հիմնական նպատակն է խթանել Ավ. Իսահակյանի գրական ժառանգության, ստեղծագործության փիլիսոփայական խորքի, ներքին կապերի քննությունը, փոխազդեցությունների և փոխառնչությունների լուսաբանումը, հայ քնարերգության մեջ նրա ստեղծագործությունների գաղափարագեղագիտական արձագանքների ուսումնասիրությունն ու նորովի արժևորումը: Նաև խնդիր ենք դրել գիտական խոսքով հանդես գալու և հրատարակվելու հարթակ տրամադրել երիտասարդ հետազոտողներին, ուսանողներին»:*

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը *նշեց. «Իսահակյանը ոչ միայն հայ, այլև համաշխարհային պոեզիայի գագաթներից մեկն է, բացի այդ ունի նաև արձակ ստեղծագործություններ, նա նաև հասարակական, պետական գործիչ է, Ակադեմիայի հիմնադիր անդամներից, երկար տարիներ գլխավորել է Հայաստանի գրողների միությունը: Իսահակյանի բոլոր գործերը համամարդկային գաղափարներ են պարունակում և ունեն մնայուն, հավիտենական նշանակություն, արժեք: Եվ մեր խնդիրն է էլ ավելի հանրահռչակել նրա թողած վիթխարի ստեղծագործական ժառանգությունը, հրատարակել բազմիցս, արժևորել այն և իրազեկել նոր սերնդին»:*

Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի տնօրեն, ՌԳԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Վադիմ Պոլոնսկու *ողջույնի խոսքում, որը ներկայացրեց ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, Ռուսաստանի*

---

* *Ներկայացվել է 14. XI. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:*

ժողովուրդների և ԱՊՀ երկրների գրականությունների բաժնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Ելենա Անդրուշչենկոն, *մասնավորապես, ասվում էր. «Ավետիք Իսահակյանի ստեղծագործական ժառանգությունը, որը դրեց ժամանակակից հայ գրականության հիմքը, անբաժանելի մասն է կազմում երկու ժողովուրդների՝ Հայաստանի և Ռուսաստանի մշակույթների: Ռուսերեն առաջին թարգմանություններից ի վեր նրա ստեղծագործությունը մտել է ռուսական մշակութային գիտակցության մեջ և ընկալվում է որպես սեփական ժառանգություն: Վ. Բրյուսովը ցնցված էր Վարպետի պոեզիայից: Ա. Բլոկը, Ի. Էրենբուրգը, Պ. Անտոկոլսկին, Կ. Զուկովսկին, Ս. Շերվինսկին, Վ. Զվյագինցևան, Բ. Ախմադուլինան և շատ այլ բանաստեղծներ իրենց թարգմանություններում ռուս ընթերցողներին են ներկայացրել հայ մեծ վարպետի ստեղծագործությունները՝ դրանք դարձնելով ավելի մոտ և հասկանալի»:*

Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին Մխիթարյան միաբան, Ավանի Մխիթարյան հոգևոր ճեմարանի տեսուչ Հ. Համազասպ Վարդապետ Քեշիշյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը, *Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի (Երևան) տնօրեն* Արմինե Ավետիսյանը *և ՀԳԳ տնօրեն, բ. գ. թ.* Մայա Գրիգորյանը: *Վերջինիս խոսքի ավարտին ցուցադրվեց իրենց պատրաստած «Ավետիք Իսահակյան» տեսանյութը:*

Լիագումար նիստում զեկուցումներով հանդես եկան ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ., ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Աելիտա Դոլուխանյանը *(«Ժողովրդական բանահյուսությունը Ավետիք Իսահակյանի «Ուստա Կարո» վեպում»),* Ելենա Անդրուշչենկոն *(«Ավետիք Իսահակյանի անունն ու ձայնը ռուսական մշակույթում»), արվ. դ., պրոֆ., ԳԱԱ արվեստի ինստիտուտի (ԱԻ) տնօրենի ժ. պ.* Աննա Ասատրյանը *(«Ավետիք Իսահակյանը և Ռոմանոս Մելիքյանը»), բ. գ. դ., ԳԻ առաջատար գիտաշխատող* Պետրոս Դեմիրճյանը *(«Ավետիք Իսահակյանը Նիկոլ Աղբալյանի հայոց գրականության պատմության վերաբերյալ հայացքների համակարգում»), արվ. դ., պրոֆ., ԱԻ երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող* Աննա Արևշատյանը *(«Ավետիք Իսահակյանի պոեզիան Տիգրան Մանսուրյանի ստեղծագործության մեջ»), բ. գ. դ., Հայ-ռուսական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի պրոֆ.* Ազատ Եղիազարյանը *(«Մի բանաստեղծության պատմություն»), բ. գ. դ., պրոֆ., ՀՊՄՀ Վ. Պարտիգուլու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ* Սուրեն Դանիելյանը *(«Իսահակյան-Օշական. տիպաբանական մի քանի հարցերի շուրջ»):*

Նույն օրը ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում անցկացվեց ևս երկու նիստ: Երկրորդ նիստում (վարող՝ բ. գ. դ. Պետրոս Դեմիրճյան*) զեկուցումներով հանդես եկան բ. գ. դ., ԳԻ առաջատար գիտաշխատող* Սուսաննա Հովհաննիսյանը *[«Ազգային ինքնության խորհրդանիշները Ավետիք Իսահակյանի ընկալումներում (Արարատ, Էջմիածին, Անի)»], բ. գ. դ., դոց., ԳԻ թումանյանագիտական խմբի ղեկավար* Եվա Մնացականյանը *(«Ավետիք Իսահակյանը Պողոս Մակինցյանի գնահատմամբ»), բ. գ. դ., ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի առաջատար գիտաշխատող* Հայկանուշ Մեսրոպյանը *(«Կարնո բարբառի Շիրակի խոսվածքը Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների*

լեզվական ատաղձ»), բ. գ. թ., ՀԳԳ տնօրեն Մայա Գրիգորյանը *(«Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքեր» ժողովածուի տպագրության պատմությունից»), բ. գ. թ., դոց., Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դասախոս* Դոնարա Մկրտչյանը *(«Արևելքի ընկալումը Ավետիք Իսահակյանի արձակ ստեղծագործություններում»), բ. գ. թ., դոց., ԳԻ արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ* Քրիստինե Բեջանյանը *(«Ավետիք Իսահակյանի բանաստեղծության անգլերեն թարգմանության մասին»), բ. գ. թ., ԳԻ տեքստաբանության բաժնի գիտաշխատող, փոխտնօրեն* Մարինե Սարգսյանը *(«Ավետիք Իսահակյանը և խորհրդային ամբողջատիրությունը»):*

Հոկտեմբերի 22-ի երրորդ նիստին (վարող՝ Եվա Մնացականյան*) ելույթ ունեցան բ. գ. թ., ԳԻ արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի առաջատար գիտաշխատող* Զարուհի Հայրյանը *(«Ավետիք Իսահակյանի քնարերգությունը Բելլա Ախմադուլինայի ընկալմամբ»), բ. գ. թ., ՀՊՄՀ Վ. Պարտիգունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ* Քնարիկ Աբրահամյանը *(«Իսահակյանը և արևմտահայ գրականությունը (նամակներ)»), բ. գ. թ., ՌԴ-ում ՀՀ դեսպանատան մշակույթի կենտրոնում գործող հայագիտական ամբիոնի վարիչ* Ավդա Մարանջյանը *(«Խորհրդանշանները Ավետիք Իսահակյանի քնարերգության գեղագիտական համակարգում»), բ. գ. թ., ԳԻ ավագ գիտաշխատող* Լուսինե Վարդանյանը *(«Ավետիք Իսահակյանի առակները»), ԱԻ կերպարվեստի բաժնի ասպիրանտ, կրտսեր գիտաշխատող* Շողակաթ Դևրիկյանը *(«Թափառական հրեայի կերպարի պատկերումը արվեստում և արտացոլումը Ավետիք Իսահակյանի «Շիդհարը» լեգենդում»), արվ. թ., ԱԻ սիյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող* Արսեն Համբարձումովը *(«Գրական ստեղծագործության էկրանավորման որոշ սկզբունքներ՝ Ավետիք Իսահակյանի «Լիլիթ» լեգենդի օրինակով»), պ. գ. թ., Հյուսիսային Ամերիկայի արևելյան թեմի Ազգային առաջնորդարանի դիվանապետ* Վարդան Մատթեոսյանը *[«Ավետիք Իսահակյանի 1918-ի նորահայտ ֆրանսերեն հոդվածը» (առցանց)], բ. գ. թ., ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի թարգմանության տեսության ու պրակտիկայի ամբիոնի դոցենտ* Հայկանուշ Շարուրյանը *(«Իսահակյանի «Լիլիթ» լեգենդը գրական զուգահեռներում»):*

Գիտաժողովի երկրորդ օրվա՝ հոկտեմբերի 23-ի երկու նիստերը տեղի ունեցան ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում: Մասնակիցներին ողջունեցին ԵՊՀ ռեկտոր, պ. գ. դ., դոցենտ Հովհաննես Հովհաննիսյանը, *ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան, բ. գ. թ., դոց.* Արշալույս Գալստյանը, *բ. գ. դ., պրոֆ., ԳԻ տեքստաբանության բաժնի վարիչ* Ավիկ Իսահակյանը*:*

Առաջին նիստում (վարող՝ Արշալույս Գալստյան*) զեկուցումներով հանդես եկան բ. գ. դ., ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի պրոֆ.* Արծրուն Ավագյանը *(«Խորհրդանիշները Ավետիք Իսահակյանի 10–20-ական թթ. ստեղծագործություններում»), բ. գ. դ., ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ, պրոֆ.* Ալբերտ Մակարյանը *(«Ավետիք Իսահակյանի «Աղա Նազար» հեքիաթը*

և նրա արևմտահայ արձագանքը»), բ. գ. դ., պրոֆ. Մագդա Ջանփոլադյանը *(«Ավ. Իսահակյանը Վերա Զվյագինցևայի գրական ժառանգության մեջ»), բ. գ. թ., ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ* Աշխեն Ջրբաշյանը *[«Ժողովրդական պոեզիայի տաղաչափական ձևերի ու միջոցների կիրառությունը Ավ. Իսահակյանի առաջին՝ «Երգեր ու վերքեր» (1898) ժողովածուում»], բ. գ. թ., ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ* Աստղիկ Բեքմեզյանը *(«Գույնի գեղարվեստական իմաստավորումը Ավետիք Իսահակյանի բանաստեղծության համակարգում»), բ. գ. թ., դոց., Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գիտության բաժնի պետ* Արտակ Ղուլյանը *(«Երկաչխարհության և հերոսի երկատման կոնցեպտը Ավ. Իսահակյանի «Լիլիթ» ստեղծագործությունում»), արվ. թ., դոց., ԱԻ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող* Մարիաննա Տիգրանյանը *(«Ուռենու կերպարը Ավետիք Իսահակյանի պոեզիայում և դրա արտացոլումը երաժշտության մեջ»):*

Երկրորդ նիստում (վարող՝ բ. գ. դ., պրոֆ. Սամվել Մուրադյան*) ելույթ ունեցան բ. գ. թ., ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի դոցենտ* Նվարդ Վարդանյանը *(«Աշխարհի առասպելաբանաստեղծական պատկերն Ավետիք Իսահակյանի պոեզիայում»), արվ. թ., ԱԻ կերպարվեստի բաժնի գիտաշխատող* Գայանե Պողոսյանը *(«Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի պատկերագրական նկարագիրը Հենրիկ Մամյանի նկարազարդումներում»), բ. գ. թ., Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի դոցենտ* Լիլիթ Գևորգյանը *(«Ավետիք Իսահակյանի «Լիլիթ» ստեղծագործությունն արվեստում»), ճարտ. թ., ԱԻ ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող* Անուշ Տեր-Մինասյանը *(«Իսահակյան: Թորամանյան: Անի»), արվ. թ., ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոս* Հռիփսիմե Վարդանյանը *(«Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի հերոսի կերպարը Ռուդոլֆ Խաչատրյանի համանուն դիմանկարում»), ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրոսներ* Անգելինա Հայրապետյանը *(«Ավետիք Իսահակյանի բանաստեղծական առաջին ժողովածուն») և* Գոհար Օհանջանյանը *(«Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարին» և Ռազմիկ Դավոյանի «Հեքիաթ Մղճավանջներով» պոեմները»):*

Գիտաժողովի երրորդ օրը՝ հոկտեմբերի 24-ին, նիստերը տեղի ունեցան Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանում (Երևան): Առաջին նիստում (վարող՝ Մարինե Սարգսյան*) հանդես եկան ԳԻ նորավարտ ասպիրանտ, հետազոտող* Արթուր Միրզոյանը *(«Փիլիսոփայական հոռետեսությունը Ավետիք Իսահակյանի վաղ շրջանի պոեզիայի մեջ»), ԳԻ ասպիրանտ, Հայաստանի ազգային գրադարանի տնօրենի օգնական, գիտական քարտուղար* Սաստա Զոհրաբյանը *(«Ավետիք Իսահակյանի և Վալերի Բրյուսովի ստեղծագործական առնչությունները»), բ. գ. թ., Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի (Երևան) ավագ գիտաշխատող* Անժելա Խորենյանը *(«Ավ. Իսահակյանի գրական, հասարակական-քաղաքական հայացքների անդրադարձը խորհրդահայ մտավորականների հուշագրություններում»), Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի*

ավագ դասախոս Սուսաննա Աբազյանը *(«Ավետիք Իսահակյանի գրաքննադատական ժառանգությունը. հայ դասական գրողներ և ժամանակակիցներ»), բ. գ. թ., ԳԻ կրտսեր գիտաշխատող* Շողիկ Խաչատրյանը *(«Ռուսաստանը՝ Իսահակյանի նամակներում և օրագրերում»), բ. գ. թ., Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող* Բուրաստան Զուլումյանը *[«Հավերժական թափառականը Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմում» (առցանց)], թարգմանիչ* Նորայր Մեհրաբյանը *(Իրան) [«Աբու-Լալա Մահարի» պոեմի պարսկերեն թարգմանությունը» (առցանց)]:*

Նույն օրվա երկրորդ նիստում (վարող՝ բ. գ. թ. Արմեն Մանուկյան*) իրենց զեկուցումները ներկայացրին* Ավիկ Իսահակյանը *[«Ավետիք Իսահակյանը Կոնստանդնուպոլսում (1911–1912): Էջեր գիտական կենսագրությունից»], բ. գ. թ., ԳԱԱ ԱԻ կերպարվեստի բաժնի ավագ գիտաշխատող* Ռուզան Սարյանը *(«Ավետիք Իսահակյանի և Մարտիրոս Սարյանի աշխարհընկալումների ընդհանրությունները»), բ. գ. թ., դոց., ԳԻ ավագ գիտաշխատող* Նունե Մկրտչյանը *[«Իսահակյանի և Թումանյանի նամակագրության հետքերով (1889–1923)»], բ. գ. թ., ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող* Լուսինե Հայրիյանը *(«Իսահակյանի «Գասպարի» մշակման առանձնահատկություններն ու հեքիաթի գրական և բանահյուսական տարբերակները»), արվ. թ., Սուչոուի համալսարանի հետդոկտորական գիտաշխատող* Անի Մարգարյանը *(Չինաստան) [«Արևելյան հավաքածուներ. չինական և ճապոնական արվեստի նմուշները Ավետիք Իսահակյանի տանը և դրանց մտահղացմունքային նշանակությունը» (առցանց)], Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ուսանողուհի* Ռուզաննա Իսահակյանը *[«Ավետիք Իսահակյան և Ալեքսանդր Բլոկ. պոետիկա, կերպար և թարգմանություն» (առցանց)]:*

Քառօրյա միջազգային գիտաժողովի եզրափակիչ նիստը տեղի ունեցավ հոկտեմբերի 25-ին Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարանում (Գյումրի): Նիստում (վարող՝ Լուսինե Վարդանյան*) ելույթ ունեցան բ. գ. թ., ԳԻ կրտսեր գիտաշխատող* Զարինե Սառաջյանը *(«Ազգային խնդիրների արձագանքը Ավետիք Իսահակյանի նամակներում»), ԳԻ հայցորդ* Կարեն Խուրշուդյանը *(Ֆրանսիա) [«Աբու-Լալա Մահարի» պոեմի ֆրանսերեն թարգմանության խնդիրները. արևելյան քնարերգությունից դեպի արևմտյան ընկալում» (առցանց)], ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի ասիստենտ* Էմմա Թեմրազյանը *(«Հանճարների բարեկամությունը. Ավետիք Իսահակյան և Հովհաննես Թումանյան»), ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դասախոս, հայցորդ* Արսեն Վարդանյանը *(«Ավետիք Իսահակյանը հայ գրականության դպրոցական ծրագրում»), Ավետիք Իսահակյանի տուն-թանգարանի (Երևան) ավագ գիտաշխատող* Աննա Սարոյանը *(«Ավ. Իսահակյանի առաջին վերադարձը Սովետական Հայաստան 1926–1930 թթ.»), ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանող* Ժան Ժամակոչյանը *(«Աբու-Լալա Մահարի» պոեմը և արդիականությունը»), բ. գ. թ., ԳԻ գիտաշխատող* Նաստա Սարգսյանը *(«Կնոջ հոգեբանության քննությունը Ավետիք Իսահակյանի «Լիլիթ» և Լևոն Շանթի «Կինը» ստեղծագործություններում»):*

Այնուհետև տեղի ունեցավ Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակին

նվիրված հոբելյանական միջազգային գիտաժողովի ամփոփումը: Ավ. Իսահակյանի հուշատուն-թանգարանում գիտաժողովի ընթացքին և ամփոփմանը ներկա էին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը և նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը: Ողջունելով մասնակիցներին՝ Ժ. Անդրեասյանը, մասնավորապես, ասաց. «Խոսելով մեր մեծերի կարևոր գաղափարների և ուղերձների մասին՝ գիտաժողովը հնարավորություն է տալիս վերլուծել, քննարկել, համադրել և տեսնել նաև առնչություններ մեր օրերի հետ: Ուրախ եմ, որ թանգարանները նաև դառնում են կենդանի խոսքի, չփման և երկխոսության միջավայրեր»: Շնորհակալություն հայտնելով գործընկերներին և հաջողություն մաղթելով գիտաժողովի մասնակիցներին՝ նախարարը կարևորեց հոբելյանական տարվա միջոցառումներում մեծանուն արվեստագետներին տարբեր մեթոդներով և զանազան հարթակներում տեսանելի դարձնելը՝ այդպիսով ապրեցնելու նրանց ժառանգությունը:

Ամփոփման խոսքով հանդես եկան նաև բ. գ. թ. Հ. Որսկանյանը և ակադեմիկոս-քարտուղար Յ. Սուվարյանը:

Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակին նվիրված հոբելյանական միջազգային քառօրյա գիտաժողովի 8 նիստերում լսվեցին Հայաստանի և արտերկրի (Ռուսաստան, Ֆրանսիա, ԱՄՆ, Չինաստան և Իրան) առաջատար գիտական կենտրոնների, գիտակրթական հաստատությունների հայագետների, գրականագետների, արվեստաբանների, մշակութաբանների և այլ ոլորտների հետազոտողների 56 զեկուցումներ: Գիտական հավաքը ձևավորեց ավագ ու երիտասարդ գիտնականների, հետազոտողների լայն միջգիտակարգային երկխոսության հարթակ, ընդգծեց Ավետիք Իսահակյանի ստեղծագործական ժառանգության արդիականությունը, նպաստեց հայ գրականության դասականի ժառանգության նորովի մեկնաբանմանն ու վերարժևորմանը:

ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի փոխտնօրեն, տեքստաբանության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ դասական գրականություն, տեքստաբանություն, հայագիտություն: Հեղինակ է 2 գրքի և 13 հոդվածի: ORCID:0009-0004-6081-2841.
m.sargsyan.msy@gmail.com